ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/34

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ
Բողոք բերող՝ «Խաչմիք» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացուցիչներ՝ Ռ. Եգանյանի, Մ. Ղարիբյանի, Կ. Պողոսյանի
«Խաչմիք» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Քոյլոյանի, Գ. Գևորգյանի, Ն. Անտոնյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, համակարգչային սարքերի և պարագաների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Խաչմիք» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 28.03.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Մասնակի՝ «Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների շրջանակում ներկայացված հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասով, վերացնել թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 18.03.2022 թվականի թիվ 4 արձանագրությունը:

2. Պարտավորեցնել թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ բավարար գնահատելու «Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների շրջանակում ներկայացված հայտը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 28.03.2022թ.-ին:

28.03.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/34 համարի ծածկագիրը:

01.04.2022թ.-ին, 08.04.2022թ.-ին, 22.04.2022թ.-ին և 27.04.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 22.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 27.04.2022թ.-ին:

2. «Խաչմիք» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Խաչմիք» ՍՊԸ-ն 28.03.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) իր կարիքների համար ԵՊԲՀ կարիքների համարհամակարգչային սարքերի և պարագաների ձեռքբերման նպատակով 23.02.2022 թվականին հրապարակելէ թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ» էլեկտրոնային աճուրդը (այսուհետ նաև գնման ընթացակարգ):

1.2. Գնման ընթացակարգի շրջանակում հայտ է ներկայացրել նաև «ԽԱՉՄԻՔ» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև Մասնակից):

1.3. Պատվիրատուն Մասնակցի հայտում արձանագրել է անհամապատասխանություններ և մեկ աշխատանքային օրով կասեցրել հայտերի բացման

և գնահատման նիստը, ծանուցելով Մասնակցին կատարելու համապատասխան շտկումներ:

1.4. Պատվիրատուի կողմից արձանագրված անհամապատասխանությունները Մասնակիցը ամբողջությամբ շտկել է սահմանված ժամկետում:

1.5. Պատվիրատուն Մասնակցի կողմից շտկված հայտը թիվ 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6- րդ չափաբաժինների մասով գնահատել է անբավարար և մերժել, այն հիմնավորմամբ, որ Մասնակից կողմից ներկայացվել են մեկից ավելի ֆիրմային անվանումներ, ապրանքային նշաններ մակնիշներ և արտադրողի անվանումներ, և Մասնակցի կողմից ներկայացված ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, մակնիշները և յուրաքանչյուրի համար ներկայացված համապատասխան արտադրողի անվանումները չեն համապատասխանում միմիյանց:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից Ակնավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի

ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել հետևյալը, որ մասնակցի կողմից ներկայացված հայտը մերժվում է այն դեպքերում երբ դրանում արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չեն շտկվում, հակառակ պարագայում հայտը գնահատվում է բավարար:

Սույն դեպքում Պատվիրատուն Մասնակցի կողմից ներկայացված հայտում արձանագրել է անհամապատասխանություններ, որոնք շտկվել են Մասնակցի կողմից սահմանված ժամկետում և ի թիվս այլնի, Պատվիրատուն մերժել է Մասնակցի հայտը թիվ 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով այն հիմնավորմամբ, որ Մասնակից կողմից ներկայացվել են մեկից ավելի ֆիրմային անվանումներ, ապրանքային նշաններ մակնիշներ և արտադրողի անվանումներ, և Մասնակցի կողմից ներկայացված ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, մակնիշները և յուրաքանչյուրի համար ներկայացված համապատասխան արտադրողի անվանումները չեն համապատասխանում միմիյանց:

Ըստ էության պետք է արձանագրել հետևյալ էական նշանակություն ունեցող հանգամանքները, որ Պատվիրատուի կողմից արձանագրված անհամապատասխանությունը վերաբերվում էր այն հանգամանքին, որ թիվ 1, 2, 3, 4, 5, 6, 9, 13, 14, 15, 16, 20, 21, 23, 25, 26, 27, 29, 31, 34, 35, 39, 40, 44, 45, 46, 47, 48, 49 չափաբաժինների մասով, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի՝ ապրանքի ամբողջական նկարագրում լրացված են սիմվոլներ, ինչը անհնար է գնահատել, և որ Մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը շտկվել է սահմանված ժամկետում, հիմք՝ թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրություն 1.6. կետ: Իհարկե այնուհետ Պատվիրատուն գնահատելով Մասնակցի հայտը արձանագրել է, որ այն չի համապատասխանում հրավերի պահանջներին 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով վկայակոչված հիմնավորմամբ, հղում կատարելով նաև ՀՀ, ֆինանսների նախարարության կողմից տրված պարզաբանմանը:

Նախ հայտնեմ, որ ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանումը կրում է ընդհանրական բնույթ, այլ ոչ թե վերաբերվում է սույն ընթացակարգին և այն վերաբերվում է պայմանգրի նախագծի մշակմանը, բացի այդ եթե խնդիրը քննարկենք նույնի համատեքստում, ուստի պարզաբանում համեմատական կիրառման համաձայն այն

բացահայտում է հայտի լրացման ձևաչափը, այն բոլոր դեպքերում, երբ Մասնակից կողմից ներկայացվել են մեկից ավելի ֆիրմային անվանումներ, ապրանքային նշաններ մակնիշներ և արտադրողի անվանումներ: Նշված պարագայում պետք է փաստել, որ բողոքարկվող ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժիններում Մասնակիցը ներկայացրել է մեկից ավելի ֆիրմային անվանումներ, ապրանքային նշաններ մակնիշներ և արտադրողի անվանումներ և համապատասխանաբար լրացրել, ուստի հողում կատարել ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանմանը ակնհայտ անհիմն է, քանզի սույն դեպքում Պատվիրատուն Մասնակցի հայտը 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով գնահատել է անբավարար և մերժել, ոչ թե լրացման կարգի խախտման հիմքով, այլ այն հիմքով, որ ենթադրաբար Մասնակցի կողմից ներկայացված ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, մակնիշները և յուրաքանչյուրի համար ներկայացված համապատասխան արտադրողի անվանումները չեն համապատասխանում միմիյանց, փորձելով դրա տակ դնել որոշակի հիմնավորումներ, որոնք ըստ էության առնչություն չունեն խնդրի էության հետ:

Սույն դեպքում պարզաբանման են ենթակա այն հանգամանքները, թե՞ արդյոք Մասնակցի կողմից ներկայացված ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, մակնիշները և յուրաքանչյուրի համար ներկայացված համապատասխան արտադրողի անվանումները չեն համապատասխանում միմիյանց և արդյո՞ք Պատվիրատուն ուներ բավարար հիմքեր խնդրին նման գնահատական տալու համար և արդյո՞ք այդ հանգամանքը բացահայտման էր ենթակա կատարման փուլում, թե՞ ոչ: Պատվիրատուի կողմից նշված հարցադրումներին պատշաճ անդրադարձ կատարելու պարագայում նոր միայն հնարավոր կլիներ կատարել Մասնակցի կողմից թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակում թիվ 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժիններով ներկայացված հայտի պատշաճ գնահատում:

Վերոգրյալի համատեքստում գտնում եմ, որ նաև Պատվիրատուն չուներ բավարար փաստական տվյալներ այն մասին, որ Մասնակցի կողմից ներկայացված ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, մակնիշները և յուրաքանչյուրի համար ներկայացված համապատասխան արտադրողի անվանումները չեն համապատասխանում միմիյանց, անհասկանալի է թե ինչ կերպ է դրանք պարզել այս փուլում, քանզի դրանք հնարավոր էր պարզել միայն պայմանագրի կատարման փուլում, երբ կմատակարարվեին ապրանքները և առկա կլիներ արձանագրված անհամապատասխանությունը: Թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲ<» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 18.03.2022 թվականի

թիվ 4 արձանագրության և Մասնակցի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի համատեղ ռաումնասիրության արդյունքում պետք է փաստել, որ ըստ էության Պատվիրատուի արձանագրված անհամապատասխանությունը վերաբերվում է արտադրողի անվանմանը՝ ֆիրմային անվանման, ապրանքային նշանի և մակնիշի հետ, քանզի մնացած մասով համապատասխանում է: Ընդ որում հատկանշական է այն հանգամանքը, որ Պատվիրատուի կողմից բավարար ռաումնասիրության առարկա չի դարձվել այն հանգամանքը, որ արտադրողների անվանումները համընկնում են, եթե իհարկե Պատվիրատուն նկատի չունի անվան նույնական համընկնում, քանզի առկա են իրավիճակներ, երբ արտագրող Ընկերության անվանումը կարող է չհամընկնել արտագրվող ապրանքի ապրանքային նշանի հետ, ինչպես նաև իրականության մեջ առկա է դուստր ձեռնարկություն հասկացությունը և երրորդ օրինակը՝ ֆրանչայզինգի պայմանագրի հիմքով ապրանքների մատակարարումը և այլն: Այսինքն Պատվիրատուն արտադրողի անվանման անհամապատասխանության հանգամանքը կարող էր պարզել միայն կատարման փուլում և եթե մատակարարվող ապրանքները չեն համապատասխանի արտագրողին, ապա նոր հնարավոր կլինի փաստել հրավերի պահանջների անհամապատասխանությունը, բնականաբար այդ դեպքում արդեն պայմանագրին: Ավելին եթե Պատվիրատուն ռաումնասիրություն կատարեր նշված ընկերությունների վերաբերյալ ապա կփաստեր, որ առկա է համընկնում և Մասնակցի հայտը թիվ 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով համապատասխանում է հրավերի պահանջներին և պետք է գնահատվի բավարար:

Նշվածով պայմանավորված գտնում եմ, որ Պատվիրատուն թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի թիվ 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չաւիաբաժինների շրջանակում Մասնակցի կողմից ներկայացված հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ արձանագրային որոշումը ոչ իրավաչափ է և ենթակա վերացման:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է Մասնակի՝ «Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների շրջանակում ներկայացված հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասով, վերացնել թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 18.03.2022 թվականի թիվ 4 արձանագրությունը:

2. Պարտավորեցնել թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ բավարար գնահատելու «Խաչմիք»

ՍՊԸ-ի կողմից 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների շրջանակում ներկայացված հայտը:

Ի լրումն 28.03.2022թ.-ին ներկայացված բողոքի, «Խաչմիք» ՍՊԸ-ն 04.04.2022թ.-ին ներկայացված լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում քննվող թիվ ԳԲՔԱ-ԷՕ-2022/34 ընթացակարգի շրջանակում ներկայացնում եմ համացանցից արտատպված տեղեկատվությունը և հետևյալ հղումները
https://www.hp.com/ru-ru/hp-news/press-release.html?id=32761#.YkXqZhYqElQ;
https://www.tadviser.ru/index.php/KoMnaH^:Compal Electronics
https://www.tadviser.ru/index.php/Koivinai-ma:Quanta Computer Inc

այն փաստի հիմնավորման նպատակով որ Մասնակցի կողմից ներկայացված ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, մակնիշները կարող են նույնական անվանմամբ չհամապատասխանել արտադրողի անվանումներին, սակայն արտադրողի անվանումը սյունյակում լրացված տեղեկությունները իրական են:

Ինչ վերաբերվում է Պատվիրատուի այն դիրքորոշմանը, որ տեխնիկական բնութագրի լրացմամբ խախտվել է դրա էությունը, քանզի արտադրողի անվանումը դաշտում պետք է լրացվի բրենդային արտադրողինը, առնվազն տարակուսելի է:

Բացի այդ Պատվիրատուի կողմից նշվեց այն դիրքորոշումը, որ հրավերով պահանջվել է «MAF», սակայն այդ հանգամանքը չի համապատասխանում իրականությանը, քանզի հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված է հետևյալը, որ Մասնակիցը պետք է ներկայացնի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ, որը իրականում ամբողջությամբ այլ բան է:

Բացի նշվածից պետք է կրկին անգամ հայտնեմ, որ արտադրողի անվանումը սյունյակում լրացված տեղեկությունները Մասնակցի կողմից ներկայացված ֆիրմային անվանմանը, ապրանքային նշանին և մակնիշին չհամապատասխանելը կատարվել է միայն ենթադրությունների հիման վրա և ինչպես Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, նրանք ցանկանում են ստանալ անմիջապես. Օրինակ HP ընկերության կողմից արտադրված ապրանք, իսկ նրա դուստր ձեռնարկության և/կամ ֆրանչայզինգի պայմանագրի շրջանակում արտադրող ընկերության արտադրանքը ստանալ չեն ցանկանում, որի իրավասությունը չունեն:

Ինչ վերաբերվում է գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի ապացուցմանը, ապա հայտնեմ, որ արտադրողի անվանումը սյունյակում լրացված տեղեկությունները Մասնակցի կողմից ներկայացված ֆիրմային անվանմանը,

ապրանքային նշանին և մակնիշին չհամապատասխանելու ապացուցման բեռը կրում է հենց Պատվիրատուն, քանզի ինքն է դրել իր արձանագրային որոշման հիմքում հենց այդ փաստական տփալը, ուստիև հակառակի պնդումը իրավազուրկ մեջբերում է:

Պայմանավորված վերոգրյալով և գործի քննության նպատակով հրավիրված նիստի ընթացքում Պատվիրատուի ներկայացուցչի դիրքորոշումներով, գտնում եմ, որ ակնհայտ անհիմն է Մասնակցի հայտը անբավարար գնահատելու և մերժելու արձանագրային որոշումը, քանզի հենց ներկայացուցիչը ընդունեց, որ իրականում այլ խնդրի պատճառով են մերժել և ըստ իրենց գնահատման արտադրողի անվանումը սյունյակում պետք է լրացվի միայն բրենդային արտադրողի անվանումը, որը ակնհայտ անհիմն է, ուստի հաշվի առնելով վերոգրյալը խնդրում եմ բավարարել բողոքը:»:

«Խաչմիք» ՍՊԸ-ն 27.04.2022թ.-ին ներկայացրել է բողոքի լրացում:

3. <u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 28.03.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/5269-2022 գրությամբ դիմել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից 28.03.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 30.03.2022թ.-ին թիվ 09/386 գրությամբ ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեզ եմ ներկայացնում «Խաչմիք» ՍՊԸ -ի կողմից 28.03.2022թ. ներկայացված բողոքին վերաբերվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և համալսարանի գրավոր դիրքորոշումը:

«Խաչմիք» ՍՊԸ-ի հայտը 2, 3, 4, 5 և 6-րդ չափաբաժինների մասով մերժելու իրավական հիմքեր

Ուսումնասիրելով «Խաչմիք» ՍՊԸ-ի բողոքով ներկայացված տեղեկատվությունը հայտնում ենք, որ ընկերության կողմից ներկայացված հայտը մերժվել է հիմք ընդունելով հետևյալը՝

1. ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի (զ) պարբերության համաձայն՝ «հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կարգի 50-րդ կետի համաձայն՝ «ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է և ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի»:

«ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի «Հայտը ներկայացնելու կարգը» բաժնի 4.3 կետի համաձայն՝ «մասնակիցը հայտով ներկայացնում է նաև իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)՝ համակարգի միջոցով: Ընդ որում մասնակիցը կարող է ներկայացնել մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, տարբեր ապրանքային նշան ունեցող ապրանքներ»:

Բացի այդ, մասնակցիների կողմից հայտով մեկ ապրանքի համար մեկից ավելի ապրանքային նշան ներկայացնելու վերաբերյալ որոշակի պարզաբանումներ ստանալու նպատակով Համալսարանը գրավոր դիմել էր գնումների ոլորտը կարգավորող լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, որը պատասխան գրությամբ հայտնել է՝ եթե հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով պետք է ներկայացնի նաև իր կողմից առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ապա դրանք կարող են լինել մեկից ավելին (որոնք ներառվելու էն կնքվելիք պայմանագրի նախագծում), եթե մասնակցի կողմից առաջարկվող՝ տարբեր երկրներում տարբեր արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշանների ունեցող ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Կից ներկայացվում է ՀՀ ֆինանսների նախարարության պատասխան գրության պատճենը:

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի վերոնշյալ նորմերից, ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանումից և հրավերով սահմանված պահանջից հետևում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից ապրանքի տեխնիկական բնութագիրը և դրա համար ներկայացված համապատասխան ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, մակնիշները, ինչպես նաև արտադրողի անվանումները պետք է համապատասխանեն տեխնիկական բնութագրին և բնականաբար միմյանց և պետք է գնահատվեն որպես ապրանքի ամբողջական նկարագիր, որը բավարար գնահատված լինելու դեպքում ամբողջությամբ ներառվում է պայմանագրում համակարգի միջոցով:

2. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգին, 1-52-րդ չափաբաժինների մասով մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Խաչմիք» ՍՊԸ -ն, և ճանաչվել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ 1, 2, 3, 4, 5, 6, 9, 13, 14, 15, 16, 20, 21, 23, 25, 26, 27, 29, 31, 34, 35, 39, 40, 44, 45, 46, 47, 48, 49-րդ չափաբաժինների մասով:

3. «Խաչմիք» ՍՊԸ-ի նախնական հայտում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

- *հայտի դիմում հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային ստորագրությամբ,*
- *բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը,*
- *թիվ 1, 2, 3, 4, 5, 6, 9, 13, 14, 15, 16, 20, 21, 23, 25, 26, 27, 29, 31, 34, 35, 39, 40, 44, 45, 46, 47, 48, 49 չափաբաժինների մասով մասնակցի, ապրանքի ամբողջական նկարագրի համար նախատեսված՝ ֆիրմային անվանում, ապրանքային նշան, մակնիշ, արտադրողի անվանում և տեխնիկական բնութագիր դաշտերում լրացված են միայն (+) և (կամ) (-) սիմվոլներ:*

4. Գնահատող հանձնաժողովի 2022թ.-ի մարտի 10-ի նիստի արձանագրության 3-րդ կետով հստակ նկարագրվել են հրավերի պահանջների նկատմամբ «Խաչմիք» ՍՊԸ-ի հայտում առկա անհահամապատասխանությունները: Նույն նիստի արձանագրության 5-րդ կետով որոշվել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և նույն օրը այդ մասին տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Կից ներկայացվում է «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.03.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության պատճենը:

5. «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի քարտուղարը 2022թ.-ի մարտի 10-ին, համակարգի միջոցով ծանուցել է մասնակցին արձանագրված անհամապատասխանությունները շտկելու անհրաժեշտության մասին:

6. Սահմանված ժամկետում «Խաչմիք» ՍՊԸ-ն թիվ 20, 21, 44, 45, 46 և 47-րդ չափաբաժինների ամբողջական նկարագրի մասով ընդհանրապես չի կատարել շտկում:

7. Բողոքի առարկա հանդիսացող 1-ին, 3-6-րդ չափաբաժինների ամբողջական նկարագրերի մասով, «Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հետևյալը՝

Հ/Հ	Անվանում	Ապրանքային նշան	Ֆիրմային անվանում	Մակնիշ	Արտադրողի անվանում	Տեխնիկական բնութագիր
1	2	3	4	5	6	7
1	Համակարգիչ 1	HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung, Lenovo IdeaCentre AIO 3 24ITL6	HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung	HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung	COMPAL,QUANTA COMPUTER, WISTRON,FOX CONN	Բոլոր նշված չափաբաժինների մասով ներկայացվել են հրավերով դրամց համար սահմանված փառացի և բառացի բնութագրերը
3	Դյուրակիր համակարգիչ 1	HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung, Lenovo Legion5 15ITH6H	HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung, Softline	HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung, Softline	COMPAL,QUANTA COMPUTER, WISTRON,FOX CONN	
4	Դյուրակիր համակարգիչ 2	HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung, Lenovo IP 3 15ITL05	HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung	HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung	COMPAL,QUANTA COMPUTER, WISTRON,FOX CONN	
5	Դյուրակիր համակարգիչ 3	HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung, Lenovo IP L3 15ITL6	HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung	HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung	COMPAL,QUANTA COMPUTER, WISTRON,FOX CONN	
6	Համակարգչային պլանշետ	xiaomi,HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung	xiaomi,HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung	xiaomi,HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung	COMPAL,QUANTA COMPUTER, WISTRON,FOX CONN	

Նախ նշեմ, որ հրավերի 1-ին, 3-6-րդ չափաբաժիններով սահմանված համակարգիչները հավաքական համակարգիչներ չեն և արտադրվում են մեկ որևէ համակարգիչ արտադրող ընկերության կողմից:

«Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից 1-ին, 4-6-րդ չափաբաժինների մասով 3-րդ, 4-րդ և 5-րդ սյունյակներում ներկայացվել են մեկից ավելի «ապրանքային նշան», «ֆիրմային անվանում» և «մակնիշ», որոնք համապատասխանում են մինյան և հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին՝ յուրաքանչյուրը իր մասով: Նշված չափաբաժինների մասով 6-րդ սյունյակում ներկայացվել են մեկից ավելի արտադրողի անվանումներ, սակայն դրանք

հանդիսանում են ոչ թե ամբողջական համակարգիչ՝ այլ համակարգչային տարբեր պահեստամասեր արտադրող ընկերություններ:

Որպես օրինակ բերեմ մասնակցի կողմից բոլոր նշված չափաբաժինների մասով ներկայացված «Samsung» ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը և մակնիշը, որի արտադրող ընկերություններ են ներկայացվել՝ COMPAL, QUANTA COMPUTER, WISTRON, FOXCONN ընկերությունները: Վերոնշյալով պայմանավորված հայտնում եմ, որ «Samsung» ապրանքային նշանով, ֆիրմային անվանումով և մակնիշով բոլոր ապրանքատեսակները ամբողջ աշխարհում արտադրվում են միայն «Samsung» գործարանների կողմից: Նշվածը փաստ է և հաստատվում է պարզ ուսումնասիրության արդյունքում՝ տեղեկատվությունը տեղադրված է Samsung-ի պաշտոնական կայքում:

Ստացվում է, որ եթե մասնակիցը հայտով ներկայացրել է նաև «Samsung» մակնիշի արտադրանք, ապա պայմանագիր կնքելու դեպքում վերջինիս կողմից կարող է մատակարարվել նաև բռենդային «Samsung» մակնիշի համակարգիչ, որը սակայն չի արտադրվել «Samsung» ընկերության կողմից՝ ոչ օրիգինալ համակարգիչ:

Բացի այդ, «Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնի մասով 3-րդ, 4-րդ և 5-րդ սյունյակներում ներկայացվել են մեկից ավելի «ապրանքային նշան», «ֆիրմային անվանում» և «մակնիշ»՝ այդ թվում նաև

«Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժինների մասով 3-րդ, 4-րդ և 5-րդ սյունյակներում ներկայացվել է նաև «Softline» անվանումով «ապրանքային նշան», «ֆիրմային անվանում» և «մակնիշ»: Վերոնշյալով պայմանավորված, հայտնում եմ, որ «Softline» ընկերությունը՝ IT լուծումների մատուցող ընկերություն է, որի կողմից ընդհանրապես չեն արտադրվում համակարգիչներ: Նշվածը ևս փաստ է և հաստատվում է պարզ ուսումնասիրության արդյունքում՝ տեղեկատվությունը տեղադրված է Softline-ի պաշտոնական կայքում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի համակարգիչների ոլորտում մասնագիտական նեղ ունակություններ ունեցող անդամների կողմից «Խաչմիք» ՍՊԸ-ի հայտը՝ 1-ին, 3-6-րդ չափաբաժինների մասով մերժվել է հիմք ընդունելով գնումների օրենսդրության պահանջները և վերոնշյալ փաստարկները:

8. ՀՀ ֆինանսների նախարարության՝ լիազորված մարմնի կողմից տրված պարզաբանմանը բողոքաբերը ծանոթ չէ, քանի որ այն տրամադրվել է միայն «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին՝ որպես պատասխան գրություն:

Բողոքաբերի այն պնդումը, որ լիազորված մարմնի պարզաբանումը վերաբերվում է պայմանագրի նախագծի մշակմանը, չի համապատասխանում իրականությանը, քանի որ այդ պարզաբանումը վերաբերվում է մասնակիցների կողմից մեկից ավելի ապրանքային նշան, ֆիրմային անվանում, մակնիշ և արտադրողի անվանում ներկայացնելու դեպքում՝ վերջիններիս հայտերի գնահատման մեթոդաբանությանը:

9. Բողոքաբերի մեկ այլ պնդում, այն մասին, որ Պատվիրատուն պետք է գնահատեր ապրանքները պայմանագրի կատարման փուլում, հակասում է օրենսդրական պահանջներին և անիմաստ է դարձնում գնահատող հանձնաժողովի ողջ գործունեությունը, քանի որ գնումների օրենսդրության համաձայն գնահատող հանձնաժողովը ձևավորվում է մասնակիցների հայտերը և դրանց համապատասխանությունը հրավերով սահմանված նվազագույն պահանջներին գնահատելու համար:

Ստացվում է, որ «Խաչմիք» ՍՊԸ-ն փաստացի բողոքարկել է ընթացակարգի գնահատող հանձնաժողով ձևավորելու փաստը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ակնհայտ է, որ՝

Ցանկացած մասնակից նախքան հայտ կազմելը և ներկայացնելը պարտավոր է մանրամասնորեն ուսումնասիրել հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման՝ ուստի մասնակիցները չեն կարող թելադրել ընթացակարգի հայտերի գնահատման գործընթացը՝ հակառակ գնումների օրենսդրությանը:

«Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված «փաստերը»՝ ենթադրություններ են, իսկ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Խաչմիք» ՍՊԸ-ի հայտը գնահատելիս առաջնորդվել է բացառապես գնումների օրենսդրությամբ սահմանված դրույթներով և նույն օրենսդրությամբ պահանջվող մասնագիտական գիտելիքներով:

Գործի քննության համար էական նշանակություն ունեցող այլ փաստեր

1. «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է «Խաչմիք» ՍՊԸ-ի հայտը նաև 39-րդ չափաբաժնի մասով: Հարցը մերժվել է մասնակցի նմանատիպ խախտման համար, սակայն մասնակցի կողմից տվյալ չափաբաժնի մասով ընթացակարգը չի բողոքարկվել:

2. Վերջին մեկ ամսվա ընթացքում թվով չորս պատվիրատուների՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության, Երևանի քաղաքապետարանի, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և հայկական ատոմային էլեկտրակայանի կողմից, «Խաչմիք» ՍՊԸ-ի տվյալները ներկայացվել են ՀՀ

ֆինանսների նախարարություն՝ մասնակցին գնման ընթացակարգերին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու նպատակով: Բոլոր չորս դեպքերում «Խաչմիք» ՍՊԸ-ի հայտերը մերժվել են՝ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին անհամապատասխան հայտ ներկայացնելու հիմքով:

3. Գնման ընթացակարգը իրականցվել է էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով, ուստի «Խաչմիք» ՍՊԸ-ի հայտի մերժման հետևանքով գնման ընթացակարգը այդ չափաբաժինների մասով հայտարարվել է չկայացած:

Հաշվի առնելով վերոգրյալը և համալսարանի կողմից ներկայացրած փաստական տվյալները խնդրում եմ Ձեզ, «Խաչմիք» ՍՊ ընկերության բողոքը մերժել:»:

Պատվիրատուն 21.04.2022թ.-ին թիվ 09/519 գրությամբ ներկայացված դիրքորոշմամաբ հայտնել է նաև հետևյալը.

«Թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/34 ծածկագրով նախաձեռնված ընթացակարգի քննության շրջանակներում Ձեզ եմ ներկայացնում հետեևյալ ապացույցները:

«ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Խաչմիք» ՍՊԸ-ն հայտով, հրավերի 1-ին, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ներկայացրել էր «Samsung» ապրանքային նշանով, ֆիրմային անվանմամբ և մակնիշով համակարգիչներ, և որպես «Samsung» համակարգիչների արտադրող կամ արտադրողներ էր նշել՝ COMPAL և (կամ), QUANTA COMPUTER և (կամ), WISTRON և (կամ), FOXCONN կազմակերպությունները:

Նույն գնման ընթացակարգի շրջանակներում «Խաչմիք» ՍՊԸ-ն հայտով, հրավերի 3-րդ չափաբաժնի մասով ներկայացրել էր «Samsung» և «Softline» ապրանքային նշաններով, ֆիրմային անվանումներով և մակնիշներով համակարգիչներ, և որպես «Samsung» և «Softline» համակարգիչների արտադրող կամ արտադրողներ էր նշել՝ COMPAL և (կամ), QUANTA COMPUTER և (կամ), WISTRON և (կամ), FOXCONN կազմակերպությունները:

Գրությանը կից Ձեզ եմ ներկայացնում «Softline» ընկերության պաշտոնական գրության պատճենը, համաձայն որի՝

«Softline» ընկերությունը չի հանդիսանում all-in-one և նոթբուք արտադրող ընկերություն, իսկ COMPAL և (կամ), QUANTA COMPUTER և (կամ), WISTRON և (կամ), FOXCONN կազմակերպությունները սերտիֆիկացված չեն «Softline» ընկերության կողմից:

Բացի այդ, գրությամբ Ձեզ եմ ներկայացնում «Samsung» և «Softline» ընկերությունների պաշտոնական կայքերից վերցված հղումներ, որոնք հաստատում են գնահատող հանձնաժողովի որոշման իրավաչափությունը՝

Samsung՝ https://semiconductor.samsung.com/about-us/locations/

Softline՝ https://softline.ru/about

Նաև գրությամբ, ստորև ներկայացված COMPAL, QUANTA COMPUTER, WISTRON և FOXCONN ***պաշտոնական*** *կայքերի հղումներով հաստատվում է այն փաստը, որ դրանք թայվանական կազմակերպություններ են:*

https://www.compal.com/

https://www.quantatw.com/quanta/english/default.aspx

https://www.wistron.com/CMS/Page/169

https://www.foxconn.com/en-us/#

Վերոնշյալ՝ «Softline» ընկերության գրությունը և սույն գրությամբ ներկայացված պաշտոնական կայքերի հղումները փաստում են այն մասին, որ «Samsung» ընկերության համակարգիչները արտադրվում են միայն «Samsung Electronics» պաշտոնական կայքում նշված գործարաններում և դրանց ցանկում առկա չեն թայվանական COMPAL, QUANTA COMPUTER, WISTRON և FOXCONN ընկերությունները, իսկ «Softline» ընկերությունը չի հանդիսանում all-in-one և նոթբուք արտադրող ընկերություն, ուստի «Խաչմիք» ՍՊԸ-ի հայտը՝ 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով պարունակում է կեղծ՝ իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն և չի համապատասխանում հրավերի պահանջներին, այն է՝ «Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից հրավերի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների համար հայտի ամբողջական նկարագրով ներկայացրած ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և դրա համար ներկայացված համապատասխան արտադրողի անվանումը չեն համապատասխանում միմյանց:

ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի (զ) պարբերության համաձայն՝ «հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կարգի 50-րդ կետի համաձայն՝ «ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է և ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի»:

ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանում է, որ՝ եթե հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով պետք է ներկայացնի նաև իր կողմից առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ապա դրանք կարող են լինել մեկից ավելին (որոնք ներառվելու էն կնքվելիք պայմանագրի նախագծում), եթե մասնակցի կողմից առաջարկվող՝ տարբեր երկրներում տարբեր արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշանների ունեցող ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Հաշվի առնելով, որ սույն գրությամբ Ձեզ ներկայացվեցին «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Խաչմիք» ՍՊԸ-ի հայտը մերժելու գնահատող հանձնաժողովի որոշման իրավաչափությունը ապացուցող անհերքելի փաստեր, խնդրում եմ Ձեզ «Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից 28.03.2022թ. ներկայացված բողոքը մերժել ամբողջությամբ:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2022/34 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից համակարգչային սարքերի և պարագաների ձեռքբերման նպատակով 25.02.2022թ.-ին հայտարարվել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգն մասնակցելու նպատակով թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Խաչմիք» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.03.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված դիմում հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային

ստորագրությամբ, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը բացակայում է, ինչպես նաև որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացված չափաբաժինների մասով՝ ապրանքի ամբողջական նկարագրում լրացված են սիմվոլներ, ինչն անհնար է գնահատել:

iv. Արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ և գնման ընթացակարգի հրավերի 8.11-րդ կետերով, որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Խաչմիք» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

v. Հանձնաժողովի 18.03.2022թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.6-րդ կետի համաձայն՝ «Խաչմիք» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է իր կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունները հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ.

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված պարզաբանման համաձայն՝ Մասնակցի կողմից ներկայացված մեկ կամ մեկից ավելի ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, մակնիշները և արտադրողի անվանումները ներառվում են պայմանագրի նախագծում, եթե մասնակցի կողմից առաջարկվող՝ տարբեր երկրներում արտադրված, տարբեր արտադրողների անվանումները, ինչպես նաև տարբեր ապրանքային նշանները, մակնիշները և ֆիրմային անվանումները և դրանց տեխնիկական բնութագրերը՝ բոլորը համապատասխանում են միմյանց և գնման ընթացակարգի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին, մինչդեռ 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով Մասնակցի կողմից ներկայացվել են մեկից ավելի ֆիրմային անվանումներ, ապրանքային նշաններ, մակնիշներ և արտադրողի անվանումներ, և Մասնակցի կողմից ներկայացված ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, մակնիշները և դրանցից յուրաքանչյուրի համար ներկայացված համապատասխան արտադրողի անվանումները չեն համապատասխանում միմյանց: 39-րդ չափաբաժնով պահանջվող «մայրական սալիկ» ապրանքատեսակը հանդիսանում է համակարգչի, այլ ոչ թե դյուրակիր համակարգչի սալիկ, ըստ՝ հրավերով սահմանված և մասնակցի կողմից առաջարկվող տեխնիկական արտադրողի անվանում նշվել է «Winzone Laptop Store» ընկերությունը որի կողմից արտադրվում են միայն դյուրակիր համակարգչի համար նախատեսված մայրական սալիկներ: 20, 21, 44, 45, 46 և 47 չափաբաժինների մասով

մասնակցի կողմից շտկման պահանջից հետո չեն ներկայացվել ապրանքների ամբողջական նկարագրերը:

vi. Արձանագրության 1.7-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 1, 3, 4, 5, 6, 20, 21, 39, 44, 45, 46, և 47-րդ չափաբաժինների մասով գնահատել անբավարար և մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից 28.03.2022թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից համակարգչային սարքերի և պարագաների ձեռքբերման նպատակով 25.02.2022թ.-ին հայտարարվել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.11-րդ կետի համաձայն՝ Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային

եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հայտերի մերժման դեպքում գնման ընթացակարգի արձանագրությունը պետք է հստակ պարունակի դրանց հիմնավորումը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից համակարգչային սարքերի և պարագաների ձեռքբերման նպատակով 25.02.2022թ.-ին հայտարարված «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.03.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով արձանագրվել է, որ «Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված դիմում հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային ստորագրությամբ, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը բացակայում է, ինչպես նաև որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացված չափաբաժինների մասով՝ ապրանքի ամբողջական նկարագրում լրացված են սիմվոլներ, ինչն անհնար է գնահատել: Վերոնշյալով պայմանավորված՝ որոշում է կայացվել մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Խաչմիք» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սակայն Հանձնաժողովի 18.03.2022թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.6-րդ կետով արձանագրվել է, որ «Խաչմիք» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է իր կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունները հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ.

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված պարզաբանման համաձայն՝ Մասնակցի կողմից ներկայացված մեկ կամ մեկից ավելի ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, մակնիշները և արտադրողի անվանումները ներառվում են պայմանագրի նախագծում, եթե մասնակցի կողմից առաջարկվող՝ տարբեր երկրներում արտադրված, տարբեր արտադրողների անվանումները, ինչպես նաև տարբեր ապրանքային նշանները, մակնիշները և ֆիրմային անվանումները և դրանց տեխնիկական բնութագրերը՝ բոլորը համապատասխանում են միմյանց և գնման ընթացակարգի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին, մինչդեռ 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով Մասնակցի կողմից ներկայացվել են մեկից ավելի ֆիրմային

անվանումներ, ապրանքային նշաններ, մակնիշներ և արտադրողի անվանումներ, և Մասնակցի կողմից ներկայացված ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, մակնիշները և դրանցից յուրաքանչյուրի համար ներկայացված համապատասխան արտադրողի անվանումները չեն համապատասխանում միմյանց, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է «Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 1, 3, 4, 5, 6, 20, 21, 39, 44, 45, 46, և 47-րդ չափաբաժինների մասով գնահատել անբավարար և մերժել:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ Հանձնաժողովը, 02.03.2022թ.-ին նիստի թիվ 3 արձանագրությամբ 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով Ընկերության հայտում արձանագրելով անհամապատասխանություններ և այնուհետև մերժելով վերջինիս հայտը, գործել է իրավաչափ՝ պահպանելով Կարգի 41-րդ, 42-րդ և Հրավերի 8.11-րդ կետերով սահմանված պահանջները, քանի որ Հրավերի տեխնիկական բնութագրի և «Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.1-ով թիվ 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով առաջարկվող բնութագրերի, իսկ այնուհետև նույն չափաբաժինների մասով շտկված բնութագրերի միջև առկա էին անհամապատասխա-նություններ:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից 27.04.2022թ.-ին ներկայացված բողոքի լրացմանը, ապա Բողոքներ քննող անձն այն քննարկման առարկա չի դարձնում, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց գործունեության» կարգի 19-րդ կետով սահմանվել է, որ Անձը պարտավոր է որոշման մեջ հիմնավորված և պատճառաբանված ձևով անդրադառնալ բողոքարկման գործընթացի կողմերի՝ մինչև բողոքը բավարարելու կամ մերժելու մասին որոշում կայացնելու նպատակով հրավիրվող նիստի անցկացման մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրը ներառյալ ներկայացրած փաստաթղթերում, գրավոր դիրքորոշումներում, ներկայացված ապացույցներում բերված բոլոր փաստարկներին, տեղեկագրում և/կամ էլեկտրոնային գնումների համակարգում հրապարակված նյութերին:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ վերոնշյալ դրույթը ինքնանպատակ չէ և ուղղված է ապահովելու հենց առաջինը բողոքարկման ընթացակարգին ներգրավված կողմերի հավասար մրցակցության իրավունքը, քանի որ յուրաքանչյուր կողմ իրավունք ունի ծանոթանալու և իր դիրքորոշումը հայտնելու մյուս կողմի կողմից ներկայացրած ցանկացած փաստաթղթի: Իսկ սույն դեպքում՝ Ընկերությունը բողոքի լրացումը ներկայացրել է որոշման

հրապարակման նույն օրը, որը չի կարող Բողոքներ քննող անձի կողմից դիտարկվել (քննարկման առարկա դարձվել)՝ վերը նշված պատճառաբանություններով պայմանավորված:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները սույն որոշմամբ բերված իրավական ու փաստական հանգամանքների և արված վերլուծությունների ամբողջությամբ անհիմն են, իսկ գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը մերժելու մասին կայացված որոշումն իրավաչափ է, որպիսի պայմաններում ներկայացված բողոքն ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից 28.03.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/34 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ